

ԾԱՂԻԿ ԿԸ ՀՐԱՌԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՇԱՐՈՐԸ ԵՒ ՄԱՐԻՆ 50 ԹԻԼ:

Բաժանորդագրին ԿԱՆՈՒՅԻՔԻ Թուրքիոյ Համար տարեկան 50 դր, Ռուսիոյ Համար 5 ռուբլի, ուրիշ երկիրներու Համար 12 ֆր: — Վեցամսեայ բաժանորդագրութիւն եւս կ'ընդունուի:

Գաւառներէն դրամի տեղ Օսմանեան Նաւահարոյժ՝ եւս կ'ընդունուի:

Միայն երեք թիւ ապառիկ կը զրկուի. այնուհետեւ բաժանորդագրին չը վճարողը կը դադրի թիւթ ընդունելէ:

Երանուցման տողը 2 զուրուշ:

ԾԱՂԻԿ

Հ Ր Ա Պ Ի Ր

ԾԱՂԻԿԻ ՎԵՐԱԵՐԵՆԱԼԱՄԷՆ ԳՈՐԾԻ ՀԱՄԱՐ ԳԻՄԷԼ
Առ ՏՅՈՐԷՆ-ՀՐԱՌԱՐԱՆԻՅ
ՅՈՒՆԱՆ Պ. ՓԱՆԱԳԱՇԵԱՆ
Պոլիս, Պաշէ-Կապու, Շէիք-ու-Իսլամ
درعليه ده (بغچه قوسنده شيخ الاسلام خاندہ
«زاغيك» غزنسى مديرى پالاقاشيان حوونان
S'adresser à
HOVNAN PALACACHIAN
Directeur du journal arménien « Dzaghik »,
Bahtché-Kapou, Chéikh-ul-Islam Han
CONSTANTINOPLE

40 փարա

Ազգային, Բաղաճական եւ Գրական

40 փարա

ՆՈՐ ԵՐԶԱՆ — Գ. ՏԱՐԻ. ԹԻՒ 26

ՇԱԲԱԹ

10 ՅՈՒԼԻՍ 1893

ԽՄԲԱՊԵՐԱՊԵՏ Ա. Ա. ՍՈՒՐԵՆԵԱՆ

ՀԻՆ ՈՒ ՆՈՐ

Ձոհրապ կը փափաքի որ նորասիրու-
թիւնը չար ոգի մը չհամարուի: Ըստ
իրեն՝ մեր սովորութիւնները, մեր բար-
քերը, մեր համոզումները, մեր գրա-
կանութիւնը հնամուլ են, հնութիւն կը
հոտին. եւ աստի յառաջ եկած է ար-
հեստաւորաց՝ գրեթէ չքաւոր, սարափ-
ներուն՝ սնանկութեան դրացի եւ վաճա-
ռականներուն ալ՝ տաքնապի մասնուած
լինելը:

Իւր յօդուածին գեղեցիկ ոճէն հրա-
պուրուած՝ պիտի ընդունէի իւր յայտ-
նած բոլոր գաղափարներն իբր ճշմա-
րիտ, եթէ մտքիս միջոց չտայի՝ իւր բա-
ցատրութեանց գեղեցկութիւնը լաւ մը
ճաշակէ՛լ յետոյ՝ բաղդատել մեր ընկե-
րական կացութիւնն իւր տեսութեանց
հետ:

Մեր սովորութիւնները հնամու՛լ. — կը
հաւատանք զինքը թէ մեծ քաղաքաց
Հայ բնակիչները չունին սովորութիւն-
ներ որոց Յօրեւեանը տօնել կարելի ըլ-
լայ. տափառը, բաճկոնը, բարսըսիւն,
կօշիկը, վընօցը, փողկապը, գաւազա-
նըն ու զարդակնոցը մեր հայրերէն խիստ
շատերուն անծանօթ էին: Մեր մայրերն
եւ մանաւանդ մամերը չէին գործածեր
ոչ չըջալգեստ, ոչ փեղըյր, ոչ փետուր,
վերջապէս ոչ մին այն հագուստներէն՝
որոցմով մեր աղջիկներն ու տիկիները կը
զարդարուին յոտից ցլուլու: Մեր տու-
ներուն մէջ այժմ չկայ շտեմարան ուր
ատենօք կը պահուէին տարեկան ուտե-
լիքն ընտանիքին, այլ անոր տեղ նորու-
թիւնը հաստատած է, էն աղքատ տան
մէջ անգամ, մեծկակ դարան մը երե-
սի ներկերու, բուսրայի, ձեռնոցի եւ այլ
անարժէք ու փաստակար առարկայից
համար: Առաջ՝ անկողինը տախտակա-
մածին վրայ կը ձգուէր, հիմայ մահճա-
կայն անհրաժեշտ պէտքերնիս է:

Բարքերն ալ հիմնական փոփոխութիւն
կրած են: Առաջ մայրերն իրենց փոքրիկ
ները կը գլխեցնէին, հիմայ ստնտու կը
վարձեն այդ ծառայութեան համար: Ա-
ռաջ երիտասարդները կ'ամուսնանային՝

աշխարհի հաճոյքը վայելելու համար,
այժմ՝ կ'ամուսնանան՝ երբ ա'ւանկարող
են այդ հաճոյքն զգալու եւ որոշած են
աշխարհէ քաջուելու: Առաջ կին կը
փնտռէին ընտանիք կազմելու համար,
այժմ կին կը փնտռեն դրամօթիտ առ-
նելու համար: Առաջ աղջիկներն երի-
տասարդաց ընկերութենէն ըստ կարի
հեռու կը պահէին եւ անդուլ կը հոկէին
անոնց վրայ, հիմայ աղջիկները կ'առաջ-
նորդուին այն տեղեր ուր գիւրութիւն
կայ եւ կանոն է երիտասարդաց հետ
գլուխ գլխի մենախօսելու կամ պարե-
լու: Առաջ անկարգ կեանք վարողները
կը վերժուէին պատուաւոր ընտանեաց
տունէն, այժմ՝ ամօթ կը համարուի
այդպիսեաց հիւրամեծար չլինելը:

Ձոհրապի հետ շատերն ալ դառնա-
պէս կը գանգատին թէ ժողովուրդն
հին համոզումներով կ'ապրի դեռ եւս:
Գլխաւորաբար հին համոզումները բնաւ
արմատախիլ եղած են: Առաջ գետակ-
ներն իրենց ծնողքէն կ'ակնածէին, այ-
ժմ՝ կ'արհամարհէն զանոնք իբրեւ ան-
կիրթ եւ տգէտ: Ի դուր հայր ու մայր
կը խնամին զանոնք, դրամ ծախսելով՝
ուսումն եւ արհեստ սովորեցնելով՝ գիրք
մը կը պատրաստեն նոցա. տեղն որ
գայ՝ այդ գաւազները գիտեն ըսել ի-
րենց. «Է՛հ, ինչ որ ըրիք պարտքեր-
նիդ էր. ինչո՞ւ համար ուրեմն ծնողք
եղաք»: Առաջ հաւատքի ու կրօնի
ոէրն անկի զծ էր. այժմ այնքան յարած
ենք հաւատոյ եւ կրօնի՝ որչափ մեր հա-
ճոյքը կը պահանջեն. Բարեկենդանն ու
Ջատիկն անխափան կը կատարենք, զի
ուտել խմել ու նոր հագուիլը կը սի-
րենք. բայց Մեծ Պահքը չենք բռնիր,
զի համոզումնիս փոխուած է. կրօնա-
մեղ չենք: Առաջ ամուսնութիւնը պարտք
կը համարէինք, աղջիկ մը գլխէ հանել
մեծ ոճիր էր. այժմ ամուսնանալ եւ ըն-
տանիքի բեռը կրել ախմարութիւն է,
աղջիկները խաբելը քաջագործութիւն:
Առաջ զաւակ ունենալու համար ուխտի
կ'երթային, այժմ՝ Մալթուսի աշակեր-
տելով մեր շատ մ'ամուսնաւորք կը
խրտչին ծնունդներէ եւ վիժումները կը
յաճախեն: Առաջ շատ նորապսակներ
խորհրդատուի պէտք ունէին իրենց ըր-
նական պարտքն առաջին անգամ կա-

րենալ կատարելու համար, այժմ՝ ...

Դարձեալ, առաջ ընթերցանու-
թեանց նախամեծար առարկայք կրօնա-
կան գրքերն էին, այժմ աղտոտ բոման-
ներն եւ նորավէպերը: Առաջ հայրն իւր
պատանի զաւակն անպատճառ արհես-
տի մը կը դնէր, այժմ գպրոցի չըջա-
նաւարտներն արհեստաւորի կեանքը
կ'արհամարհեն: Առաջ պանդխտին հա-
մար դժբաղդութիւն էր իր ընտանիքէն
հեռի ապրելը, այժմ պանդխտն իր
ընտանիքին չվերադառնալու պատճա-
ռանքներ կը գտնէ. թուե՞նք տակա-
ւին:

Երբ հին բարքերն ու համոզում-
ները տեղի կուտան, կարելի՞ է որ գը-
րականութիւնը նախկին ժամանակներու
բարքը պահէ. մանաւանդ թէ մեր տար-
բերութիւնը վաղեմի ընկերական վիճա-
կէն՝ պիտի ապացուցուի մեր արդի գը-
րականութեամբ որ կրնայ փոխուիլ բայց
չանհալիր: Ապագայն թերեւս աւելի
անկողմնակալ լինի յերեւան ածելու եւ
դատաւճիւրը տալու հին գրագէտնե-
րուն եւ նորերուն, հին գրականութեան
եւ նորին մասին. մեք միայն երկոցուն
վրայօք մեր գիտցածն ըսենք: Աւետա-
րանէն, Հրակէ-Սիրոյն եւ Պլինձէ-Բաղաբէն
յետոյ՝ մեր ընկերային կեանքն ուսում-
նասիրողներ շատ ունեցանք: Ասոնք
երկու յատկանիշով կը զանազանին սա-
կայն այժմեաններէն. նախ որ տոհմա-
յին բարքերն ու համոզումները շատ
լաւ գիտէին, երկրորդ որ յառաջագի-
մութիւնը բարեջրման օրինօք այսինքն
աստիճանաբար կը քարոզէին. իրենց
նպատակն էր հնոյն աղիւս կողմերը
պահպանել՝ աւելի եւս աղիւսացնելով, եւ
փոստ ու աղտոտ կողմերը վերաշինել.
այժմեանները այդ պայմաններուն մէջ
կաշկանդուած չմնալու նորութիւնն ալ
հնարեցին. մեր ընկերային խնդիրները
կը յուզեն՝ առանց ընկերութեան վի-
ճակն ու պահանջքն ուսումնասիրելու:
Ընթերցանութիւնը ծաւալելու համար՝
դեռակիրթ ժողովրդեան ու անփորձ
պատանեկութեան փորձութիւնն եղող
կրքերը կը փայտայեն. իբր պաշտելի կը
ցուցնեն այն աղջիկներն որ վէպի արժանի
կեանք մը կրնան վարել. իրենց չգիտ-
ցածը՝ զոր օրինակ Հայ գրաբար լեզուն՝

կը ծաղրեն. գրագէտի մենաշնորհը կուտան իրարու և կրօնական խնկարկուծեան տեղ՝ գրական խնկարկուծիւնը կը հաստատեն. մատնացոյց կ'ընեն ինչ որ կայ յԱնգլիա ի Ֆրանսա՝ բայց ինչ որ կայ այն տեղերը՝ փողոցը նետուած, ազգերու պարկեշտ մեծամասնութիւնէն արհամարհուած. կարծես մեղք կը համարին գրելու թէ այդ երկիրներու ժողովուրդները մեծ են, հարուստ են, իմաստուն են՝ վասն զի սերտիւ յարեալ են իրենց տոհմային աւանդութեանց, վասն զի աշխատող ու խնայող են. ո՛չ, այս բաները չեն ուզեր գրել, զի այն ասէն գիրքը կամ թերթը շատ չծախուիր:

Եւ այսպէս, երբ ա՛յլ աւանդապահ չենք, երբ նոր են մեր սովորութիւնները, նոր՝ մեր բարքերը, նոր՝ մեր համոզումները, նոր՝ մեր գրականութիւնը, և այդ նորութիւնք անդ իմացութիւն հրապուրով իրենց կը քաշեն մեր բովանդակ ընկերութիւնը, բնական չէ՞ որ պակսի մեր մէջ բարոյական կորովը, տկարանայ գործունէութեան ոգին որ ատենաօրդդած է զչայն աշխարհի չորս անկիւնները վաղելու՝ հանգիստ հաց ու խաղաղ բնակարան ունենալու համար:

Այժմ՝ մեր սիրտը, մեր հոգին մի միայն անձնամալ հաճոյից վայելման կը ծառայեցնեն ամէն ինչ. աշխատութիւնը՝ գերութիւն մ'է. համեստութիւնը՝ բեռ մը, պարտականութեան զգացմունք՝ նախապաշարումներ:

Ի հարկէ ժողովուրդն առ հասարակ այս կործանարար նորութեանց անտալ վարակուած չէ. կրնանք տակաւին ըսել « Են եօթն հազարը որք ոչ երկրպագին Բահազու » . եթէ գանդատելու տեղի կայ, այն ալ ոչ թէ մեր հնամուտութեանն՝ այլ նորամուտութեանն է. նորամուտութիւն անընտրող՝ որ գեռակիրթ ժողովրդոց համար աղքատութեան ու բարուց ապահովութեան պատճառ կը լինի, և թէ իմաստուն ձեռքեր պատուար կը կանգնին անոր դէմ:

Նորը, միշտ նորը. բայց նորին լաւը և միշտ յարեալ մնալով հնոյն աղնիւնին:

Ա. Ա. ՍՈՒՐԵՆՍԱՆ

Զ Ա Ր Թ Օ Ն Ք

Առ եւտերպէ

Մեծ անգարթոյց քնով ննջելու տենչանօք տանջուած պահուս՝ լոյս տեսաւ Զարթօնք:

Չուզեցի բանալ զայն, վախճալով որ մի՛ գուցէ զիս կապէր կենաց՝ որմէ խոյս տալ կը բաղձայի: Հիմայ որ կամայ ակամայ կենաց վերստին լծուեցայ, չուրջս կը ձգեմ ակնարկս: Բանի՛ մը չը յաւիր գարձեալ. անդրադոյնին բաղձանօք հոգիս յարտածամ կը տանջուի:

Բաց ի մխիթարութեան գրէն, զոր մոհճիս մէջ Հայր Արիստակէս բերաւ, և ոչ գիրք մը դեռ կարգացած եմ, — ու կարգաւ ալ բաղձանք չունիմ: Միայն Զարթօնք երբ երբեմն ձեռքս կ'առնեմ: Ու... կը հետեւի մշտնօրէն զարթնման՝ մատաղ հոգւոյ մը մէջ:

Արուեստի սէրն որքա՛ն ալ յիս բնածին ըլլայ, գրուածոց մէջ վայելչութեան որքա՛ն ալ գնահատող ըլլամ, որքա՛ն ալ ներդաշնակութիւն փնտռեմ յուզմանց արտայայտութեան մէջ, սակայն և այնպէս ոչինչ ինձ երեւցաւ լեզուի ներդաշնակութեան և տաղաչափութեան կատարելութեան. զորս գրատեղեակ ամէն ընթացող քերթուածոց մէջ պիտի գտնէ՝ բերկրանօք այնքան աւելի մեծ որքան հեղինակին Հայ իգական սեռին պատկանող անհատ մ'է մատաղատի դեռ: Լեզուէդ որ ըստ նիւթոյն մտանադրական կ'ըլլայ կամ ուսմական կամ խառն, և քերթողական արուեստէդ՝ որ անսոգիւտ է գրեթէ յաւէտ, նիւթոց զանազանութեանն ու չափոց փոփոխութեանն, հասարակ անմիտ մակերևութեան ժուժկալ գործածութեանն՝ տարիքիդ — չըսեմ սեռիդ — մէջ այնքա՛ն հագուադիւտ յատկութիւն, հնարելու գտանելու ջանքէն՝ ոյր զօրացումն հրաշալի արդիւնքներ պիտի արտադրէ, առ դաստիարակս երախտագիտութեանդ՝ զոր այնքան առաւել պէտք է ի վեր հանել որքան երեւութական ինչ կը դառնայ նոր սերնդեան մէջ բարոյական այդ բարեմասնութիւնն, այս ամենէն, այո՛, ոչինչ երեւցաւ ինձ, Զարուհի, Զարթօնքիդ մէջ, Թաղմութիւնն որ այժմէն հոգիդ կը համակէ, երազներն՝ ոյց անվախճան յաջորդութիւնն իրական տիեզերքն աչքէդ կը ծածկէ, մոտանալ նայուածքդ՝ որ ծովային թռչնոյ մը նման ջուրց մակերեսն յուզելով կը խորասուզուի հորիզոնին անհունութեան մէջ, « ափ մի հող » ի տենչէ՝ հայիւ ապրիլ սկսած, անագորոյն տենչեր ալ՝ սրտի հալումներ տեսնելու ու « վառնի զտեալ սիրոյ ըմպելին անյագօրէն ըմպելու », — ահա ինչ որ գրեցէդ կը ցայտէ, ինչ որ հոգիս կը խռովէ ու միտքս կ'ահարկէ: Ահա ինչ որ ինձ յաւէտ կամ նուազ մթին խորհորդներ կ'աղղէ կնոջ ու բանաստեղծութեան ճակատագրին վրայ:

Կնոջ միտքն իմաստասիրութեան բարձրացած կը գտնեմ Զարթօնքին մէջ, և կը գտնեմ բանաստեղծութիւնն՝ անդնդաօնայ անձանթ մեա՛յլ խորութեանց մէջ: Երեք չորս հատուածոց մէջ զգացումն այնքա՛ն ներդոյժ է, շեշտն այնքա՛ն խորազգացիկ, կեանքն՝ ի մի բան՝ այնքա՛ն հոծ, մինչ զի հոգին պէտք կ'զգայ խաղաղ ընթերցմանց, — զոր բարեբաղդաբար կը գտնէ նոյն հաւաքածոյին մէջ իսկ: Տասապեալ հոգեակն նորափայլ քերթուհւոյն երբեք երբեք կը հանգարտի, և յայնժամ կը լսես արտոյալ զուարթագին առողջ երգեր՝ ոյք գարուն կը բերեն սրտիդ:

Յաջորդ հատորն աւելի՛ զուարթաղթ թէ աւելի մեալալմամբ պիտի ըլլայ, — քան զի ծաղկահասակ բանաստեղծուհին թողած չէ քնարն: Իր ներշնչարանն այժմ ծովն է մանաւանդ, ծովն հանգարտ կամ մրրկայոյզ զոր միշտ սիրած է, առ որ Պայրէնի նման խանդաղատալից և երկիւղալից սքանչացում մը կը տածէ:

Կապուտակ կամ թխպահոծ, անձկաւ կ'սպասուի եւտերպեայ նոր հաւաքածոյն: Միայն թէ տասն զիս արտասուել, երգէ միշտ, Զարուհի:

Ե. ՏԼՄԻՐՃԻՊԱՇԵԱՆ

8 յուլիս 1893

Գատըքէյ

ԳԵՂԱՐՈՒԵՍԸ ՍԵՐ ՍԷՋ

Ճաշակի նրբացման և զգացմանց աղնուացման ամենէն գլխաւոր պատճառներէն մին է գեղարուեստը: Իւր այլ և այլ կերպարանաց ներքեւ, բանաստեղծութիւն կամ երգ, նկար կամ անգրի ելն. ի՛նչ հզօր ազդեցութիւն մը գործէ հոգւոյն վրայ, բարձրացնելով զայն նիւթոյն գոծութիւններէն վեր, հո՛ն ուր հրեշտակի թեւերով երկնաւայց, մարդկային սիրտը կը վայելէ հաճոյից ամենէն սուրբն ու ամենէն անապական:

Ժողովրդի մը քաղաքակրթութեան աստիճանը կարելի է չափել այն յառաջդիմութեամբք զորս ըրած է գեղարուեստից մէջ:

Բոլոր ազգաց այս մասին ըրած անդուլ անդադար ճգանց հանդէպ մենք ի՛նչ կ'ընենք. պատասխանը չեմ կարծեր որ շատ պատուաբեր ըլլայ: Յոյժ ցանցառ բացառութիւն մը յարգելով հանդերձ, պէտք է խոստովանիլ թէ շատ նիւթապաշտ (բառին ոչ-փիլիսոփայական իմաստով) ժողովուրդ մ'ենք: Անշուշտ չեմ ուզեր անտեսել սակաւթիւ անձնական ջանքերն, սակայն կը հարցնեմ թէ ի՛նչ ըրած ենք գեղարուեստը մեր մէջ զարգացնելու համար, և մանաւանդ ի՛նչ ըրած ենք արուեստագէտները քաղաքներու համար, ի՛նչ ըրած ենք մեր արուեստագէտներուն որք անշուշտ պիտի ջանալին, փշրին իրենց գրիչը, վրձինը կամ քնարն, եթէ արուեստին հզօր ոյրը չը կապէր զիրենք անոր, և չաշխատէին միմիայն հոգեկան պէտք մը գոհացնելու համար: Առանց այդ անշահախնդիր անձնասիրութեան առ արուեստն՝ ոչ Չուհաճեան պիտի ունենայինք, ոչ Դուբեան, ոչ Ֆիթվաճեան, ոչ Պէշիքթաշեան, ոչ Արապեան, ոչ... և ոչ ուրիշներ:

Պիտի առարկէք թէ մեր բոլոր դպրոցներուն մէջ գծագրութիւնը կ'ուսուցանեմք պարտաւորիչ կերպով և երաժշտութիւնը դպրոցէն մտած է մեր շատ մը տուններուն մէջ. բայց ո՛չ մեր դպրոցներէն նշանակելի արդիւնք մ'ունենցած ենք և ո՛չ մեր տուններուն մէջ եթէ ոչ արուեստագէտներ՝ գոնէ արուեստասէրներ ունինք: Մեր վարժարանաց մէջ արդէն, ուր ամէն բանի նախատարեքը կ'ուսուցանենք, կարելի չէ որ գեծագործութիւնը առարկայ ընենք մասնաւոր հոգածութեան, և վարժարանէն դուրս ինչո՞ւ աշխատինք զայն զարգացնել քանի որ ոչ հացադործը կ'առնէ, ոչ մասվաճառը՝ իսկ երաժշտութիւն ըսելով մեր մէջ կը հասկընանք միայն դաշնակ. ոչ ուրիշ գործիք, ոչ երգ և ոչ ինչ: (Անշուշտ դպրոցին մէջ մեր տղոց քանի մը երգ սորվեցնելով երաժշտութիւն ուսուցած ըլլալու յաւակնութիւնը չենք կրնար ունենալ):

Մեր տղայոց դաշնակ չենք ուսուցաներ, աղջիկներուն մենավաճառն է այն, բայց անոնց ալ կը սորվեցնենք պարզապէս անոր համար որ եթէ գտնենք ամուսնացնենք, կարենանք ըսել « Դաշնակ գիտէ... »: Մեր աշակերտուհիներէն քանի՞նք կրնան քիչ շատ լուրջ կտոր մը նուագել և մանաւանդ հասկնալ զայն: Մեզ համար բօլբա, մագիւրբա, ֆաւրիլլ, շատ շատ վալս, և եթէ ստանցմէ զատ կարենայ լա բոլիւո սիւն վիւէոթը նուագել, ծափահարութիւն, սքանչելի է, սքանչելի...:

Եւ այս կ'երթայ մինչեւ ամուսնութիւն : Արդէն անկից յետոյ ի՞նչ պէտք կայ այլ ևս , և ի՞նչպէս կարելի է աշխատիլ , երբ բոլոր ընտանեկան հոգեր , առանին գործեր կը ծանրանան մեր կիներուն վրայ : Ի՞նչպէս ժամանակ գտնել , այնպէս չէ՞ : Իրաւունք ունին : Եւ սակայն մեր կիները բոլոր ժամանակը ունին զբաղելու իրենց արդուարդին ամենէն յետին մանրամասնութիւններով , և քայլ առ քայլ հետեւելու եւրոպական նորաձեւութեանց , հոգ չէ թէ իրենց ձեւին ու դէմքին վայլեն անոնք կամ ոչ :

Ընդհանրապէս դատարարականութեան մէջ մէկ նպատակ ունինք միայն . մեր ազգը շատ փառա վաստակին և մեր ազնիւները կարգուին : Ահա՛ մեր խոհալը :

Անցեալ օր տեսայ խումբ մը Անգլիացի զբոսաշրջիկներու որ բոլոր Պոլսը պտըտած , իւսկիւտար կ'անցնէր Չամլըճան տեսնելու : Շոգեհաւին մէջ ազնիւներուն առաջին դործըն եղաւ իրենց ալպօմներն հանել և նկարել Պոլսոյ նշանաւոր վայրերը : Մէկն , իւր աչքը փոխ առ փոխ դարձնելով ծովեզերքէն իւր ալպօմին , մատիտի քանի մը գծերով կը նկարէ նաւահանգիստը , կամուրջը , շոգեհանները , ուրիշ մը Կալարա-գուլէսին , և ուրիշ մը Գրգ-գուլէսին՝ իրենց առաջնորդին հարցնելով այդ չէնքին անունը , պատկերին ներքեւ նշանակելու համար , և իւր Անգլիացիի արտասանութեամբ կրկնելով . Գի-գ-գուլէսի , Գի-գ-գուլէսի : Մեր կիներէն կամ ազնիւներէն քանի՞նք կրնաք ջուշնել որ ուղէ և կարենայ ալպօմ մ'ուսնենալ :

Մեր նախորդ սերունդը այսպէս անասարկեր չէր սակայն երաժշտութեան մասին : Շատ երիտասարդներ , իրենց աւօրեայ զբաղումէն դառնալով , երեկոյին ժամանակ կը գտնէին աշխատելու այլ և այլ երաժշտական գործիներով , և կիւրակ օրերը կը հաւաքուէին խմբովին նուագելու : Այսպէս երաժշտասէրներու խումբեր կազմուած էին ի Խաղէօյ , Սամաթիա , Բերայ , Պալատ , Գուս-գափու և ուրիշ թաղեր , որք ընտանեկան զբոսանաց հոգին ըլլալէ զատ , շատ անգամ իրենց գործակցութիւնը նուիրելով բարեհաւատակ հանգստեան , զլիսաւոր սատար մը կ'ըլլային հանրային օգտին :

Նոյն խի ի Ռոտտոթո , ուր գացի երկու տարի յառաջ , որքան զարմանօք նոյնքան հաճոյքով տեսայ այդպիսի երաժշտական խումբ մը , կազմուած տեղացի Հայ երիտասարդներէ որք շատ յաջողութեամբ կը նըւագէին բաւական գեղեցիկ կատրներ : Մեր սիրեցեալ Վեհապետին գահակալութեան տարեգարծի օրն հաճոյալի ցոյց մ'էր զոր կազմակերպած էին , խմբովին երթալ նուագելով կառավարական պաշտօնատան հանդէպ , այն պահուն ուր հոն գացեր էր Ս . Առաջնորդն ի շնորհաւորութիւն , կարծես այսպէս ձայնակցելով , երաժշտութեան սուրբ լեզուով , այն բարեմաղթութեանց զորս Ն . Սրբազնութիւն յանուն տեղացի Հայոց կը կրկնէր , այս բարեբաւտիկ առթիւ , Ն . Կայսերական Վեհափառութեան թանկագին կենաց և արեւշատութեան համար : Երեկոյին՝ ամենէն վառ ու զուարթ կեդրոնն էր գլխաւը ուր այդ խումբն հաւաքուած էր , իւր նուագներով մեծագոյն փայլը տալով ընդհանուր խորախճանութեանց :

Քաղքի մը մէջ , որ և ո'չ մէկ կերպով կրնայ բազմապատիւ մայրաքաղաքին հետ , երիտասարդներ կը սիրեն երաժշտութիւնն ու կ'աշխատին զարգացնել իրենց տաղանդէն , իսկ հոս հազիւ քանի մ'օր կ'ապրի Բնարը :

Մեր ընտանեկան զուարճութեանց մէջ ի՞նչ բաժին ունի երաժշտութիւնը : Ո՞ր երեկոյթի մէջ մեր երիտասարդներ ու երիտասարդուհիներ կը խմբուին երգելու , կամ կը հաւաքուին դաշնակին շուրջը , նուագի մ'ի լուր , վայելելու այն սուրբ հաճոյքը զոր միայն երաժշտութիւնը կրնայ պարգեւել :

Մեր գումարմանց մէջ այրերը կը խաղան , կիները կը բամբասեն . . . Եթէ արդէն չեն խաղար :

Եւ հիմայ դուք որոշեցէք քաղաքակրթութեան աստիճանը որուն վրայ կը գըտնուինք :

Յ . Թ . ԱՐԱՄԵԱՆ

Հ Ա Ռ Ա Թ Ը

Ամրան տօթագին օրերն արգելք չեն վարժարանաց միջանակարաշխութեան հանդէսներուն : Այս եղանակին՝ մարդկային մարմինն և՛ մինչեւ աստիճան մը՝ միտքը տաքութեան աղբիջութեամբ թուլցած՝ հանգստեան պէտք ունին թէպէտ , բայց սովորութեան պահանջներն աւելի զօրաւոր են բնութեան պահանջներէն : Կը հպատակինք առաջիններուն , վասն զի կ'ամէնաք ծաղրելի ըլլալէ , անտես կ'ընենք երկրորդները , վասն զի՝ վերջապէս՝ առողջութիւնն իսկ կը տուժենք , բան մ'որուն արդէն կարեւորութիւն չենք տար շատ անգամ :

Միջանակարաշխութեան հանդէսներն անբաժանելի հետեւորդներն են տարեկան քննութեանց , զորս նոյնպէս փոյթ ունինք ամառուան մէջ կատարելու : Տղայոց չորչարանաց ամիսներն են յունիսն և յուլիսը . կարծես ծառերն այդ խեղճ էակներն որոց պտուղը քաղելու համար քառասուն աստիճան ջերմութեան անհրաժեշտ պէտք կայ : Ի՞նչ ընենք , խնդրին մէկը հօրին մէջ քար մ'է՛ նետեր , քառասուն խելացի կը միանան և չեն կրնար հանել : Տեսայ շատ ուսուցիչներ որք կը գանգատէին այս սովորութեանց դէմ , բայց անգամ մը հաստատուեր են , դժուար է բաւնալ զանոնք :

Այդ հանդէսներն յանկուցիչ բան մը ունին ժողովրդեան համար , որ խուսնեմ կը վազէ տեսնելու իրեն ու իր ազգականներուն զաւակաց միջանակառնելը՝ կամ լսելու կարգացուելիք ճառերը :

Մասնաւորապէս ուշադրութիւն կը դարձունեմ շրջանաւարտներուն ատենախօսութեանց վրայ , որոց նիւթոյն ընտրութենէն և բացատրութեանց ձեւէն կրնայ մակարերուիլ խօսողին ձգտումն և ստացած կրթութեան ուղղութիւնն , որ ի հարկէ ուղղակի ալ պիտի աղբէ իւր ապագան կենքին և մասամբ իւր ապրելիք միջավայրին վրայ :

Ծիանօթներէս մտացի և կենցաղագէտ անձ մը՝ իւսկիւտար Հով-սփուլի վկայականաց բաշխման հանդիսին գտնուելով՝ դիտողութիւն կ'ընէ թէ շրջանաւարտ Հայ օրիորդաց ատենախօսութիւններն անախորժ տպաւորութիւն ըրած են իւր վրայ . նոքա ճառեր են միջնորդային , երկնային մարմնոց , մագնիսականութեան վրայ , և այսու հաւաստի ըրեր են զինքը թէ տան մը խաղաղ ու գոյութիւն շրջափակին մէջ ապրելու չեն պատրաստուած . և եզրակացուցեր է , անմահ Ռուսոյի հետ , թէ բանգէտ լինելու յաւակնութիւնն ունեցող և այնպէս երեւիլ շանացող աղջկանց քանի՛ դժուար է ըստ արժանոյն կրել ամուսնական լուծը : Փափաքելի չէ՞ որ մեր շրջանաւարտ աղջիկներուն ատենախօսութիւններն եղիայի աւելին մօտ հոգւով ու ոճով գրուէին :

Նմանօրինակ փափաք մ'ալ մանչերու համար կը տածեմ . սաացուած դաստիարակութեան շնորհիւ իրենց ոգիները առգործուած լինելու են , զոր օրինակ , սա սկզբունքով թէ՛ խաբէութենէ և անբարոյականութենէ զերծ ամէն արհեստ՝ հաւասարապէս յարգելի են և պէտք չէ խրաշիլ անոնցմէ . չեմ յիշեր սակայն թէ այս մտօք ճառ մը խօսուած ըլլայ երբեք մեր շրջանաւարտից միոյն կողմանէ :

Լուրջ գլուխներ և զգայուն սրտեր սկսած են պրպտել մեր կրթական բոլոր թերութիւնները , ճար մը կ'որոնեն ապագայ սերնդեան տալու փրկարար ուղիով իւր մը , և , գուցէ չհաստաք , քանի մ'ամիս առաջ եկեղեցական մը , սատուիկ զգածուած մեր մանկութեան անպատակ առաջնորդուելէն , կը մորմոքէր շարիքին առաջը չկրնալ առնուելուն համար : « Կ'աղաչեմ , կ'ըսէր , գոնէ Ծոպիկի միջոցաւ տոհմային դաստիարակութիւնն ուղղելու պէտքին վրայ շատ խօսեցէք . ծնողք պէտք ունին գիտնալու թէ ո՞րքան մեծ պատասխանատուութիւն կայ ըրենց վրայ՝ զաւակաց կրթութեան խնդրոյն մէջ . դաստիարակք խորհելու են թէ ո՞րքան սուր է իրենց պաշտօնը : Մեղք որ Հայ մանկութեան պատրաստութեան գործին մէջ աղգու ձեռնարկ մ'ընելու անկարող եմ . այլ յայտարարեցէք թէ սիւրայօժար կը հատուցանեմ տանն ոսկի իւր մրցանակ այն անձին՝ որ դաստիարակութեան կատարեալ ընթացքի մը լաւագոյն և զանալը ցուցնող դասագիրք մը պատրաստէ » :

Կը ցաւիմ որ այդ աղնիւ եկեղեցականին անունը չեմ կարող յայտնել , աւելի կը ցաւիմ որ այս մասին Սմբատ էֆ . Դաւթեան լրագրոյս միջոցաւ երկու ամիս առաջ կոչուին ընելէ յետոյ՝

Կը ցաւիմ որ այդ աղնիւ եկեղեցականին անունը չեմ կարող յայտնել , աւելի կը ցաւիմ որ այս մասին Սմբատ էֆ . Դաւթեան լրագրոյս միջոցաւ երկու ամիս առաջ կոչուին ընելէ յետոյ՝

ցարդ ոչ ուստեք այդպիսի երկասիրութեան մը պատրաստութեան ձայնը լըսուեցաւ: Կը կրկնենք ուրեմն այս առաջարկութիւնը, ոչ այնքան խոստացեալ մրցանակին, որքան նիւթին կարեւորութեան համար:

Յաւառիթ պատճառաւ մը կ'ընդհատեմ գրութիւնս. Այվաղեան Արքահամ էֆէնտի սենեկէս ներս կը մտնէ, անհուն վիշտ մը դիմացը վրայ. Սահակ Մեսրոպեան մրցանակին արժանացած լինելուն վրայ ուրախացած՝ ընտանեօք Արմաշ գնացած էր երեք շաբաթ յառաջ, և այժմ կը վերադառնար՝ անդ հողին աւանդելով իւր 22 տարեկան որդին, Յակոբիկը, աշակերտ Պոլսոյ Նաւային վարժարանին՝ ուրկէ նաւապետութեան վկայական պիտի ստանար վեց ամիսէն: Մէկնեմիդ կոչուած մահաբեր հիւանդութեան զոհ եղաւ հէգ երիտասարդն որո՞ւ նկարագրին վրայ դաշտաւոր ունենալու համար կը բաւէ իմանալ թէ հոգեվարի վայրկեաններու մէջ «Հայրիկ, ըսեր է. մնաս բարով, Պէրպէրեան էֆէնտիին ձեռքը կը պաղենամ»: Մանկութեան ատեն Պէրպէրեան վարժարանին մէջ աշակերտած էր, և մահուան բռնակին իսկ՝ ինքզինք երախտապարտ կ'զգար առ իւր դաստիարակն. այսպիսի զաւակ մը կորուստ նեւ անհնարին գ. ժբազդութիւն չէ՞ ծընողի մը համար:

Այվաղեան էֆ. խորին շնորհակալութիւն կը յայտնէ Արմաշու վանքին բոլոր միտրանութեան, մասնաւորապէս Տ. Մաղաքիա Օրմանեան եպիսկոպոսի և Տ. Եղիշէ Գուրեան վարդապետի, որք ամէն տեսակ խնամք, գիւրտութիւն և օժանդակութիւն չեն խնայած Յակոբիկի հիւանդութեան միջոցին, և յուզարկաւորութիւնը կատարելու են արժանաւայել հանդիսիւ:

Ջաւահայ այս օրինակ կորուստներ սաստկապէս կը յուզեն զիս, և անոնց մահու պատմութենէն այնքան կը ջըլատուիմ որ դրիշը կ'իյնայ ձեռքէս:

Ա. Ա. ՍՈՒՐԵՆԵԱՆ

Հ Ր Ա Շ Ա Լ Ի Ք

Քառորդ դար յառաջ ոչ ոք կը համարձակէր հրաշալեաց վրայ խօսիլ կամ գրել. այս՝ այն տեսակ անխնայութիւն մ'էր որ մարդս ապուշ պիտի կարծեցնէր, և կամ յիմարանցը առաջնորդէր:

Ժամանակի ընթացքին հետ ամեն ինչ կը փոխուի, և ի շնորհս գիտական յառաջգիտութեանց՝ ամեն ինչ կ'ստուգուի. ալ կասկածն ու ծիծաղը մէկդի պիտի թողուլ. չըսենք թէ հրաշալիք չը կայ: Առաջին անգամ չէ որ կը հաւատանք ճշմարտութեան մը զոր երկայն ատեն ուրացած եմք. օրինակներ բազմութիւ են. անցեալ դարու գիտուններն ալ երկնքէն քար խնալուն չէին հաւատար, թէ եւ բովանդակ հրեւութիւնը զայն կը հաստատէր:

Հրաշալեաց խնդիրը ամեն ժամանակէ աւելի գրգռած է մտքերը, և բազմաթիւ խուզարկումներու յայտ բերած շօշափելի ճշմարտութիւնք կ'ստիպեն մեզ հաւատալ թէ յաջորդ դարու մէջ հրաշալիք գիտական ընդարձակ ու հետաքրքրաշարժ ճիւղ մը պիտի լինի. թերեւս զմեզ պիտի մեղադրեն մեր թերահաւատութեան համար, և հաւանական է որ կենսագրութեանց մէջ ըսեն՝ խօսելով Տիւմայի, Ամբլի, Թրուսոյի և մեզ աւելի մօտ եղող Շարքոյի և Բասթէօրի նկատմամբ. «Ասոնք իրենց ժամանակին սիւսլ գաղափարներու մասնակից էին, ոգւոց ազդեցութեան չէին հաւատար, կ'ուրանային այն ներգործութիւնը զոր լուսինը մարդուս կազմուածին վրայ կ'ընէ. նոքա կախարհները խելագարներ կը նկատէին, և քնաշրջութիւնը՝ ջղային հիւանդութիւն մը»:

Անորոշ և այնքան ընդարձակ սահման մ'ունեցող հրաշալիք անուան տակ կը դառնան շարք մը անհաստատ վաւերականութեամբ անլոյծ և անլուծելի երեւոյթք. հրաշալեաց մասը կը կազմեն մագնիսականութիւն, մէսմիսականութիւն, ոգւոց միջամտութեան վերադրեալ իրողութիւնք, կախարհութիւն և չըջուն սեղաններ: Գիտունք տակաւին նոր կը համարձակին զբաղիլ այս ամենով, և մանաւանդ քննածութեամբ (hypnotisme) և քնաշրջութեամբ, որք հրաշալեաց մի մասը կը կազմեն, և մեծ կարեւորութիւն կը ցուցնեն, քանի որ նրապատակ ունին հիւանդութիւնները բուժել:

Տօք. Ալամ, որ այս ճիւղին ջերմ աշխատող մ'է, կը յիշէ շատ մը իրողութիւններ որոցմէ ահաւաստի հետեւեալ երկուքը:

Բարիքի բժիշկներէն մին, որ շատ երեւելի անձ մ'է, և շատ անգամ բժշկական Ակադեմիայէն մրցականաւոր, որ մը ինձ լուսնկարեալ կենդանադիր մը ցուցուց, որ իւրն էր. գլխոյն վրան ու ետեւի կողմը կնոջ պատկեր մը կար, որ սպիտակ, ամպամած և մթին պտակով մը չըջապատեալ էր. նա ինձ ըսաւ. «Մի զարմանաք, այս իմ հանգուցեալ խեղճ կնոջ ստուերն է. զոր մի քանի ամիս յառաջ կորսնցուցի. դուք չէք կրնար հաւատալ թէ ինչպիսի քաղցր միութարութիւն մը տուաւ ինձ այս կենդանագիրը. ոգեհարց (spirite) լուսնկար մ'է այս. մի քանի վայրկեան իմ խեղճ հանգուցեալին վրայ խորհեցայ, և այն պատկերն որ իմ յիշողութիւնս կը զարթուցանէր, լուսնկարչական ապակեոյն միջոցաւ արուեցաւ»: Տօքթօրը դէմքիս վրայ կասկածի և թերահաւատութեան նշաններ տեսնելով, աւելցուց. «Ահ, միայն ես չեմ, նայեցէք ասոնց», և ցուցուց բազմաթիւ կենդանագրեր, որոց իւրաքանչիւրը յատուկ տեսիլ մ'ունէր, և բնականաբար կը տարբերէր ներկայացեալ անձին համեմատ. հոս՝ մանուկ մը կար որ որորանին մէջ մեռած էր, անգին Նափոլէոն Գ. ի և կամ Հենրիկոս Ե. ի գլուխը, որք նոր մեռած էին, բոլորն զարթուցեալ մօր մը վշտով կամ հաւատարիմ անձի մը յիշողութեամբ:

Մի քանի տարի յառաջ, Իտալացի բժիշկ մը, քնաշրջիկի մը ընկերակցութեամբ Պորտո եկաւ. ի շնորհս քնաշրջիկին կրկնատեսութեան, բժիշկը կը յաջողէր ամեն հիւանդութիւն բժշկել, մանաւանդ այն տեսակ հիւանդութիւնները զորս ֆրանսացի բժիշկներ անբուժելի կը նկատէին: Օր մը այս

բժիշկին կը ներկայանայ ստամոքսային հիւանդութիւն ունեցող հիւանդ մը. Տօքթօրը երկայն հարցախորձէ վերջ կ'ըսէ. «Հատուկին է գեղեցիկ բժշկել, հիմա կը բերեմ քնաշրջիկը որ քեզ դարմանը կ'ըսէ», և իբր լմաց տրուած ձայնէ մը անմիջապէս յետոյ, դռնէ մը կ'երեւնայ ճերմակ գգեստներ հագած, աչքերը գոց և մազերը ցիրուցան շատ գեղեցիկ կին մը որ ի քուն էր. քնաշրջիկը յառաջ կուգայ, և երբ Տօքթօրը «Դիտեցէք» ըսելով կը հրամայէ անոր, այն ատեն քնաշրջիկը կ'աղաղակէ. «Ահ, պարոն, ինչխեղճ ստամոքս ունիք դուք... կը տեսնեմ զայն, դատարի է... ո՛չ... արիւն կայ, վէրքեր կան... միակ դարման մը կրնայ գեղեցիկ բժշկել, այս այն դեղահատերն են զորս Տօքթօրը պիտի տայ ձեզ»: Տօքթօրը արթնցուց այս երիտասարդ աղջիկը որ պարկեշտութեամբ հեռացաւ:

Արդարեւ ասոնք շատ զարմանալի կը թուին մեզ, և ներկայ սերունդն որ իր բոլոր սկզբունքն ու գաղափարները նիւթապաշտական հիմանց վրայ դրած է, մտերմաբար չէ կարող նայիլ ասոնց. հիներու հետ միանալ և ըսել թէ՛ կախարհութիւնք գիտութիւն մ'է, թէ՛ հոգեկան ազդեցութիւնք կը կատարուին, և թէ՛ վերջապէս սիւսլած եմք ուրանալով, ասոնք բուռն հոգմեր են որք պիտի ցնցեն գիտական հիմեր ու մտքեր:

Անցեալը որ մեզ համար մառախոյալատ եղած է ցարդ, և որուն նկատմամբ, շատ քիչ ծանօթութիւն ունիմք, կ'երեւի թէ ունեցած է քաղաքակրթութիւն մը առաւել քան որչափ կը կարծեմք. առասպելներ չեն կրնար լինիլ արեւելեան և մանաւանդ եգիպտական թագուն գիտութիւնք, որք մասնաւոր անձանց ձեռքը շահու աղբիւրներ ըլլալով, անոնց հետ միասին անհետացած են մասամբ:

Մարդս՝ բնածին փափաք մ'ունի գերբնականին հաւատալու. կը սիրէ կարծել թէ հրաշալիք կան, թէ անտեսանելի և անխնայալի գործօն զօրութեան մը ազդեցութեան տակ կը գտնուի: Ժամանակը, և մանաւանդ այս մասին եղած գիտական յառաջգիտութիւնք պիտի ցոյց տան թէ կա՞ այդ տեսակ զօրութիւն մը, և պիտի ազապեցանեն նաեւ թէ՛ մարդուս՝ գերբնականին հաւատալու համար ունեցած փափաքը իւր առած կրօնական դատարարականութեամբ արդիւնքն է թէ ոչ:

ԱՅՆԹԱՊ

ԹԱԹՈՒԼ ՔԻԻԲԷԼԵԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԶԱՅՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Կ. Պոլսի Հայոց Թերթերից. Թիֆլիսի «Նոր-Դար» լրագիրն իւր 88-րդ համարում արտատպել էր ուշադրութեան արժանի հետեւեալ լուրը. — «Երաժշտապետ Համբարձում էֆէնտի Զէրչեան, որ Արմաշու գաղթականաց մէջ կը դասախօսէ, պատրաստած է Շարականի և Ժամադրի ամբողջ ձայնագրութիւնն, որ պիտի տպագրուի: Համբարձում էֆէնտի մայրաքաղաքս (Կ. Պոլս) եկած և իւր այդ կարեւոր աշխատութիւնը մատուցած է Ս. Պատրիարքին»: Շատ ուրախ ենք, որ մի ձայնագրագէտ ժրջան ուսուցիչ — որպիսին է Պ. Համբարձում Զէրչեան — մէն միայնակ ձայնա-

գրեւէ «Շարականն» ու «Ժամագիրքը» իր հետ թէ անձամբ ծանօթութիւն ունենալու պատիւ չունիմ, բայց լսած եմ, որ յարգելի Պ. Չէրչեանն՝ իմ անմոռանալի ուսուցիչ (Հայկական ձայնագրութեան) բարեյիշատակ Նիկ. Ս. Թաշճեանի ընկերներէն մէկն է:

Արեւելեան ամենահին եկեղեցիներէն մինն է Հայոց Ս. Եկեղեցին, որ իւր նախնի առաքելական ծէսերն ու սրբազան արարողութիւններն, անաղարտ և նախկին անփոփոխ գրութեամբ՝ դարուց ի դարս պահել և պահպանել է իւր անարատ սուրբ ծոցում, և ազգիս միութեան Աստուածեղէն այդ միակ օղակը (եկեղեցին) նոյնութեամբ և անփոփոխ հասած է մեզ. իսկ մենք ևս, որպէս Հայրական անկողնուէրէն հարազատ ժառանգութիւն՝ նոյնութեամբ պէտք է աւանդենք մեր ազգայն սերունդին: Յաւելով պէտք է խոստովանիմք, որ Հայոց ոսկեղինիկ հինգերորդ դարու մեր երանաշնորհ Ս. Թարգմանչաց, Սահակայ և Մեսրոփայ և այլոց հոգեւոր Շարականների արտադրած բուն Հայկական հարազատ եղանակները, քաղաքական դառն հանգամանքների շնորհիւ, սկզբից մինչև այժմ, այնքան փոփոխութեանց և տղաւորութեանքի երթարկութեամբ են, որ այդ բոլոր եղանակների ընդհանուր հիստորիայ մէջ, Հայկական հին եղանակների մնացած իսկական, հարազատ մի քանի ելեւէջներ գտնելն անգամ դժուար է. ըստ որում՝ Հայկական երաժշտութեան անցեալի մասին ո՛չ մի հաստատ գրաւոր փաստ չկայ: Հայոց Ս. Կրօնքն ու եկեղեցին, մեր մայրենի լեզուն և գրականութիւնը՝ իրենց 16 դարեայ անցեալն ունին. տարաբարտարար եկեղեցական երաժշտութեան պատմութիւնը չունինք. դուցէ՛ նա էլ շատ անգին հնութիւնների հետ կամ անգործ կորել է և կամ մինչև այժմ տակաւին անյայտութեան մէջն է մնում:

Թիւեւ, մենք ունինք ձայնագրող կոչուած հին Շարականների մէջ բազմաթիւ խաղեր որպիսիք են, փուռ, էկորն, վերնախաղ, բէկորն, նեբնախաղ և պարոյկ: Եւրոպական ձայնագրութեան հետեւողութեամբ, միայն այս եօթը ձայնանիւնների անունները կրճատելով, կնքել են (Կ. Պօլսի Հայ երաժիշտները) այսպէս Փօ, Է, Վէ, Բէ, Խօ, Նէ, և պա: Բայ ի այս 7 ձայնանիւններից, այլ և այլ անուններով և ձևերով բազմաթիւ ձայնանիւններ կան կան, որոնք մինչև ցարդ տպուած են Ձայնագրող ասուած գործածական Շարականի մէջ, որոնց իսկական նշանակութիւնն ու զօրութիւնը ո՛չ ոքին գեռ յայտնի չէ: Ահա այստեղ առաջ ենք բերում զրանց մի քանիսի անունները միայն. ոլորակ խունն, խում, Բաբաւ, փարուք, հունայ, սուր, բուր, բաւ, Բաւաւ: Այսքան բազմաթիւ ձայնանիւններն արդեօք Հայ հանձարի, խելքի և մտքի ստեղծագործութիւններն են, թէ՛ ուրիշ զրանցի ազգերիցն են վերցրել և իւրացրել և կամ թէ՛ այդ բոլոր ձայնախաղերի իսկական զօրութիւնն ու նշանակութիւնը մեր նախնիք երբեք չէ հասկացել են թէ ոչ. և թէ զանազան դարերում, Հայոց երաժշտութիւնն ի՞նչ վիճակի մէջն է եղել և հետզհետէ նա որպիսի փոփոխութեանց է երթարկուել: Ահա այս մասին մեր ամբողջ մատենագրութեան մէջ՝

ո՛չ մի յիշատակութիւն չկայ և այդ անյայտ հանելուկի լուծումը՝ մասնագէտ Հայ ուսումնասէր երաժիշտ ազգայն հետազօտողին է վերապահուած:

Այսքան միայն յայտնի է, որ մեր Շարականների և այլ հոգեւոր երգերի բոլոր եղանակները, բացառապէս՝ աւանդաբար, բերանէ բերան անցնելով, եկած հասած են մեզ և այդ եղանակները դարերի ընթացքում մեծ փոփոխութեանց ենթարկուելով, իրենց նախնի հարազատ տիպարը մեծաւ մասամբ կորցրած պէտք է լինին:

Երջանկայիշատակ Գէորգ Դ. Վեհ. կաթողիկոս մի գեղեցիկ միտք յղացաւ. — այն է՝ ձայնագրել տուեց մեր բոլոր Շարականներն ու երգերը, որպէս զի՝ ամէն տեղ, ո՛ւր որ Հայոց եկեղեցի կայ, միանման, կանոնաւոր և ներդաշնակ երգուին և մեր Ազգային — Ժողովրդական երգեցողութեան մնացած բոլոր եղանակներն այլ ևս փոփոխութեանց և աղաւաղումների չենթարկուին: Յաւելով որպէս պէտք է խոստովանիլ, որ հոգեւոր Հայրապետը, չնայելով որ իւր այդ վսեմ նպատակին հասնելու համար արտակարգ միջոցներ ձեռք առաւ, մեծագումար ծախք և ջանք չխնայեց, այսու ամենայնիւ, նա իւր դովելի մեծ նպատակին չհասաւ. որովհետեւ երջանկայիշատակ Հայրապետը՝ միմիայն իւր գիտցած (Կ. Պօլսի) եղանակով ձայնագրել տուեց մեր բոլոր Շարականներն ու հոգեւոր երգերը, որոնց եղանակները՝ Ս. Էջմիածնի միաբանութեան և Ռուսահայ ամբողջ հոգեւորականութեան և առ հասարակ Հայ ժողովրդի ահանջին անձանց և խորք էին, այս իսկ պատճառով էլ, ո՛չ մի բազմամարդ գիւղերում և քաղաքներում երբէք ընդունելութիւն չգտան այդ ձայնագրեալ մեծածախ հրատարակութիւնները և մինչև ցարդ փոշիով ծածկուած անգործագրելի մնացին:

Մեր համեստ կարծիքով, անհրաժեշտ հարկաւոր է, մեր սակաւաթիւ ձայնագրագէտ՝ Հայ և Եւրոպական ձայնագրութեանց լաւ հմուտ անձերից մի «Երաժշտական մասնագիտ» կազմել, Ս. Էջմիածնի վարչութեան հովանաւորութեան ներքոյ. այնտեղ ուշի ուշով քննել, յարմարաւոր և պիտանի ընտրել տալագրութեան համար իսկ մկնցները, ռեգային անխորթ կլիկոցները և անընական ձգձգաբանութիւններն և յունական անհարազատ Քրէյթիլէյ-րէյիլները, որոնք անշուշտ մանկների և բայաթիների հետեւողութեան ծնունդ լինելով անյարմար և միանգամայն անպէտք են, այդ բոլորը անալոյման պէտք է դուրս ձգել: Բայ ի սրանից, «Երաժշտական մասնագիտ» անդամների պարտաւորութիւնները լինելու են. 1. Հայոց ծխական և միջնակարգ դպրոցների մէջ ընդունուած ձայնագրութեան դասագրքերն ու երգարաններն որոշել. 2. Հայոց երկսեռ դպրոցների մէջ երգեցողութեան հմուտ ուսուցիչներ և մեր եկեղեցիների համար երգեցիկ խմբերի վարժարաններն պատրաստել:

Երբոր այսպիսի կարգ և կանոն կը մտնի Հայոց երգեցողութեան մէջ և երբոր այդ օրինակելի կարգապահութիւնը ամենայն խստութեամբ կը պահպանուի ամենուրեք, միայն այն ժամանակ մեր Հայկական ձայնագրութիւնը կարող է անմահանալ և Հայ ժողովրդի գեղարուեստական ու գեղասիրական ճաշակի զարգացման նպաստել:

Թիւրքիոյ Հայոց բոլոր թերթերից կը խնդրէի, որ սոյն երկտող արտատպելով, իրենց անաչառ կարծիքները յայտնել չը զանային:

ՂԱԶԱՐՈՍ ԲԶ. ՅՈՎՍԷՓԵԱՆ
30 ցունիսի, 1893
ի Մոսկուա

ԽՈՍԱԿՑՈՒԹԻՒՆ ԲԺՇԿԻՆ

Օ Ձ Ա Ց Ա Ի

Օձացաւ (Երևանք) կրնայ լինիլ վիթաբուժական և վէրքի մը բոլորաթիւն երեւան երեւել, կամ բժշկական՝ այսինքն ինքն իրմէն երեւել: Այս վերջին պատգային՝ մասնաւորապէս գէճքին վրայ կ'ենէ, բայց կրնայ մարմնոյն միւս մասանց վրայ ևս տարածուիլ, երբեմն առաջի ելած տեղին վրայէն անհետանալով:

Բժշկական օձացաւ կրնայ տեւել քանի մը ժամէն մինչև 2 օր: Նշաններն են սարսուռ, գլխու ցաւ, փսխել, ծայրայեղ տկարութիւն, սաստիկ ջերմ որ կը աւելնի մինչև որ խաղաւարտն անցնի: Այս խաղաւարտը կը լինի կարմիր, դուրս ցցուած, փայլուն, անկանոն. ընդհանրապէս քթին, ականջին կամ աչքին մօտերէն կ'սկսի, և տարածուելիք տեղը բաւական զգալի կերպով կ'ուռի: Կզակին տակի գեղձերը կ'ուռն: Ուռած մասերուն կողմը կը ցաւի և կը քերուի, վերնամաշկը կ'ենէ:

Վիթաբուժական օձացաւ. — վերը նկարագրուած խաղաւարտը կրնայ վէրքի մը մօտ երեւել: Այն ատեն վէրքը չգոցուիլ և հիւանդին վիճակը կը ծանրանայ:

Ջրաւորութիւն, զրկանք, վիշտ, աղտոտութիւն, ցուրտ օդոյ հոսանք, բայց ամէն բանէ առաջ՝ վէրքին գէշ դարմանուիլն կը հրաւիրեն այս հիւանդութիւնն: Շնորհիւ Բասիլէօսի հանձարեղ գիւտերուն, եթէ վէրքերը զերծ պահուին օդին միջոցներէն, վիթաբուժական օձացաւ շատ քիչ անգամ կը պատահի:

Բժշկական կամ ինքնարեւ օձացաւ բաւական յաճախեալ է: Ամենէն աւելի կանայք ենթակայ են. անգամ մը բունուողը նորէն կրնայ բունուիլ, նոյն իսկ շատ անգամներ:

Եւք և ասոր նման մօրթի հիւանդութիւն ունեցողներ արամաղիր են այս հիւանդութեան: Վերջերս Թրանսական թըլլկական ակադեմիան հաստատեց վճարար թէ այս արտը տարափոխիլ է, և թէ նոյն իսկ հիւանդութեան սկիզբէն կրնայ փոխանցիլ:

Անոնք որ կանխապատրաստութիւն ունին այս արտին՝ պէտք է զգուշանան օձացաւ ունեցողներու քով գտնուելէ: Անոնք որ օձացաւ ունեցողի մը քովէն կուգան, պէտք չէ երթան այնպիսի մէկու մը քով որոյ վրայ վիթաբուժական գործողութիւն մը կատարուած է, որքան ալ փոքր բան մը լինի այդ գործողութիւնն, կամ դեռածին կնոջ մը քով: Հակաանխտութիւն սենեկի և զգեստեղինաց:

Թարգմ. Թ. Թ. Հ.

ՀԱՂԸ ԵՒ ՀԱՂԱԳՈՐԾԸ

ԳՈՐԾԵԱԿԱՆ ՀՐԱՀԱՆԳՔ ՅՈՒՂԻՍ ԱՄՍՈՅ

Բանջարեղիկաց պարտեզ. — Զրեցէք, ջը-
րեցէք և ջրեցէք. ահա ամենակարեւորը
ներկայ ամսոյ համար. առտու իրկուն, ար-
շալոյսին և վերջալոյսին. ցնցուղը ձեռքէ
մի՛ ձգէք: Զրեցէք ըսի, այո՛, սակայն մի-
թոռով մը. առաւօտուն կը բաւէ լաւ կեր-
պով թրջել տունկին արմատը միայն. իսկ
երեկոյին, միշտ արեգակը մարը մտնելէ ետ-
քը, ամբողջ տունկը վերէն ի վար, որպէս
զի տերեւներն ալ լուսացուն և նոր ոգևո-
րում տանեն, թեթեւապէս փորեցէք բան-
ջարեղիկաց արմատներու հողը. ջանացէք
միշտ թոյլ վիճակի մէջ թողուլ զայն. հող-
չէ, թող անյարդ և տձեւ երեւի, վասն զի
այս աշխատութիւնը կարեւոր է ջնջելու
համար այն վայրի խոտերն որք ամենուրեք
կը բուսնին բանջարեղիկաց շուրջը և կը բաժ-
նեն աման համար հողին շնորհած ոյժը:
Նեցուկ փայտերու կամ, եթէ մօտ գտնուին,
պատերու կապեցէք տամաթիւններու տուն-
կերն. կարեցէք ասոնց ծաղիկ չունեցող ճիւ-
ղերն և անօտարացուցէք տերեւները. փրցու-
ցէք նաեւ ճիւղերու ծայրերն երբ շատ
կերկարին: Պարտիզին մէկ շուք կողմը ցա-
նեցէք չոգգամ, սպաննախ, պրատ, բողի,
լուբիա և եղբոր: Հողով պատեցէք կա-
րոններու արմատները և մանաւանդ մի
խնայէք ջուրը: Ամառս դէպ ի վերջերը ցա-
նեցէք վաղահաս սպիտակ սոխ: Աղբաջուր
տուէք ծներկներու, և՛ որպէս զի շուտ
աճին՝ աղ ցանեցէք անոնց վրայ:

Մառաւստեմբ. — Շարունակեցէք տնկել
եղակենդ մակարոյժ ծիւերն տորանոցի մը
մէջ, աշնան եղանակին փոխադրելու հա-
մար զայն իրեն համար պատրաստուած տեղ
մը: Տանձենիներու մանր ու տկար ստուղ-
ներն, եթէ շատ ստուղ տուած են, փըր-
ցուցէ՛ք, որպէս զի մնացածներն օգտուին
այս անօտարացումէն: Անօտարացուցէք նաեւ
ծորենիի ճիւղերն որք կ'սկսին բողբոջիլ.
պաշտպանեցէք զանոնք զօրաւոր հովերէ:
Եթէ օդերը չոր ըլլան, ջրեցէք բոլոր պըտ-
ղատու ծառերն, մանաւանդ սալորենին,
դեղձին և ծիրանին, որոց ստուղներն
հասունանալու վրայ են: Զրեցէք մասնաւո-
րապէս ասոնց նոր տնկուած տունկերն:

Ամառս քսանին մօտերը բացէք դեղձի-
ներու ստուղներն, փրցնելով զանոնք
ծածկող տերեւներն, որպէս զի արեգակն
ճառագայթներն ուղղակի աղդեն նաեւ ա-
նոնց վրայ՝ առաւ համար գոյն. փայլունու-
թիւն և թաւշերեսութիւն որք հարկաւոր
են ստուղին հասունութեան: Կտրեցէք ծա-
ռերու արմատից վրայ գտնուած մոկա-
րոյժ ծիւերն. կտրեցէք նաեւ գափնիներու
շատ երկնցած ճիւղերն և կանոնաւոր վիճա-
կի մը մէջ գրէք զանոնք:

Մարկունց պարտեզ. — Ներկայ ամսոյս
մէջ արագարար կ'աճին բոլոր ծաղկետուն-
կերն. ուստի մի զլանաք անոնց ամէն խը-
նամբ, որչափ երկնան, քովերնին մէկ մէկ
փայտ դրէք և կապեցէք: Մաղկապարտե-
զին մաքրութիւնն կարեւոր լինելով՝ այս
մասին ալ մի վարուիք ծոյլերու պէս: Զօ-
րաւոր անձրեւէ մը վերջ, քիչ մը միջոց
տուէ՛ք, մատով կամ փայտի կտորով մը

հողը խառնեցէք և ուռցուցէք ծաղկա-
տունկի արմատին շուրջը: Ստէպ ստէպ աշ-
քէ անցուցէք բոլոր ծաղկետունկերն, մաս-
նաւորապէս վարդերն. փրցուցէք այն
ծաղիկներն և դեղնած տերեւներն որոց
ժամանակն անցած է այլ ևս: Իրիկուն առ-
տու ջրեցէք բոլոր ծաղկետունկերն իրենց
արմատներէն, և երբ ժամանակին անցնե-
լով՝ ծաղիկները կ'սկսին թափիլ իրենք ի-
րենց, այն տանն ջրմուղով մը վերէն ի վար
լուացէք ամբողջ տունկերն: Զրեցէք մանի-
շակներն, եթէ պէտք կ'զգացնեն: Յանեցէք
տակաւին, սեպտեմբերի և հոկտեմբերի մէջ
ծաղիկ ունենալու համար, յափուկ, վաղե-
նիկ և սպիտակ՝ ճնշասպար (thlaspi): Մի
խնայէք բնաւ այն կանանչ որդերուն որոց
ստէպ կը հանդիպիք ձեր ծաղկետունկերուն
վրայ:

Ներկայ ամսոյ մէջ ձեր գլխաւոր աշխա-
տութիւնը պիտի ըլլայ կտրուել մաքրել և
մանաւանդ ջրել այն ամէնն որոց վրայ
գրեցի:

Յ. Մ. ԱԶՆԱԽՈՐԵԱՆ

ՄԵՐ ՀՈՐԻՋՈՆԷՆ ԴՈՒՐՍ

Ընդհանուր քաղաքականութեան տեսա-
կետով մեծ կարեւորութիւն ունեցող դէպ-
քեր որոց հետեւութիւններն այժմէն հաշ-
ուել յանդիմութիւն կրնայ համարուիլ, լը-
րագրաց առատ նիւթ մատակարարեցին վեր-
ջին եօթնեկիս մէջ:

Գերմանական խորհրդարանը միայն տասն
և հինգ ձայնի մեծամասնութեամբ վերջա-
պէս վաւերացուց զինուորական օրինագիծն
որոց զօրութեամբ Գերմանական կայսրու-
թիւնը մերձաւորապէս ճիւղ հարիւր հազար
զօրք պիտի ունենայ զինուց տակ՝ նոյն իսկ
խաղաղութեան ժամանակ: Կը մնայ այժմ
տեսնել թէ Գերման կառավարութիւնն ի՞նչ
միջոցներու պիտի գործի որ կարենայ հայ-
թայթել այս օրինաց զօրծաղրութեան հա-
մար հարկաւոր եղած ծախուց միլիոններն:
Սակայն այս խնդրոյն քննութիւնը Բայնզ-
թակի ձմեռուան նստաշրջանին թողլով՝
կայսրը կը փակէ ժողովը և կայսրուհւոյն
հետ կը մեկնի՝ Ծուէտի ջուրերուն մէջ իւր
սովորական ծովային պտոյան ընկելու:

Մինչ քսն՝ ձեռք բերուած կարեւոր յաջո-
գութեանն և աւելի վստահ ապագային վը-
րայ, կայսրն և իւր նախարարապետը կը
խորհին քիչ մը հանգիստ առնուլ և գէթ
առժամապէս մոռնալ կը ջանան կառավա-
րական հոգերը, մինչ Ռուսական կարեւոր
լրագիր մը կարծիք կը յայտնէ թէ Գերմա-
նական բանակին ստացած նոր յաւելմամբ
Ռուսիա և Ֆրանսա եւս հարկադրեալ են ի
մօտոյ իրենց զօրքերն աւելցնել նոյն համե-
մատութեամբ, ուրիշ լրագրեր վերստին կը
յուզեն ընդհանուր զենքիկեցութեան խըն-
դիրը, և այս մասին Եւրոպական պետու-
թեանց նոր առաջարկ մ'ընկելու մտադրու-
թիւնը կը վերագրեն... նոյն ինքն Գերմա-
նիոյ կայսրեր:

Ընդհանուր զենքիկեցութեան մը գոր-
ծադրութեան դժուարութիւններն առանց
իսկ ի նկատ առնելու, դիւրին է մտածել
թէ ներկայ պարագայից մէջ այսպիսի ձեռ-
նարկ մը Գերմանիոյ կողմանէ որչափ հա-
կասական և հետեւաբար հաւանականութեան
որչափ հեռի է:

Ֆրանսական գործերը վերստին կ'սկսին
իրենց վրայ հրաւիրել պետութեանց ուշա-
գրութիւնն, և այս՝ Սիամի խնդրոյն պատ-
ճառաւ որ ծանրակշիւ հանգամանք մը կ'առ-
նու: Յայտնի է թէ Սիամ Հնդկաչինի մէջ
5-6 միլիոնի բաղմամարդութիւն մ'ունեցող
պետութիւն մ'է՝ միանգամայն սահմանակից
Չինաստանի և Ֆրանսական ու Անգլիական
գաղութականութեանց, այն է Աննամի, Գամ-
պոնի և Պիւմանիոյ: Սիամի կառավարու-
թիւնը վերջերս շահախնդիր բարեկամաց
խորհուրդին անսպով, Գամպոնի սահմանաց
վրայ ստնձգուելուն երաժ և աշք գոցած
էր Ֆրանսացի պաշտօնատարի մ'սպանման:
Ֆրանսա բնականաբար՝ այլ ընդունայն՝ հա-
տուցում-պահանջած և խնդրոյ ներքեւ ե-
ղած սահմանադրութեան ճշգրէ առաջարկած
էր: Սիամցւոց ընդգիմութեան առջև Ֆը-
րանսական կառավարութիւնը՝ սահմանագը-
լուին վրայ մի քանի կարեւոր դիրքեր
գրաւել տալէն վերջը, հրամայեց Հիւման
փոխ-ծովակալին՝ մի քանի մարտնաւով
երթալ Պանկոք, Սիամի մայրաքաղաքը,
Մէնամ գետին վրայ: Սիամցիք ուղեցին գե-
տին մուտքն արգելուլ. այլ Ֆրանսացիք
բռնի մտան կարճատեւ ռմբակոծութենէ մը
վերջը: Այս դէպք տեղի կուտայ Անգլիա-
կան և Ֆրանսական խորհրդարանաց մէջ
նախարարական կարեւոր և փոքր ինչ իրա-
րու հակառակ յայտարարութեանց և Պարոն
Տըվէլ, Ֆրանսայի արտաքին գործոց նախա-
րարը, ի վերջոյ ժողովին կը ծանուցանէ թէ
կառավարութիւնն հաստատապէս որոշած է
կատարեալ զոհացում՝ ստանալ Սիամէն:
Խորհրդարանը՝ մոռնալով իւր ներքին երկ-
պառակութիւնները՝ միաձայնութեամբ կը
հաւանի այս քաղաքականութեան և վստա-
հութիւն կը յայտնէ կառավարութեան վը-
րայ: Առ այժմ խնդիրն այս վիճակին մէջ
կը մնայ:

ԳՐ. ԶԱՔԱՐԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Շաբաթ օր Պաթու մէն մայրաքաղա-
քըս հասան Ս. Լիմիածնայ Սինօղի ան-
գամներէն Տ. Սարգիս Գասպարեան և
Տ. Արիստակէս Սեդրակեան եպիսկո-
պոսներ, ընկերակցութեամբ Սուքիաս-
եան Եփրեմ և Տէր-Մովսէսեան Միսրոպ
Արեղաներու: Երկու եպիսկոպոսք հիւր
կը մնան ի Մաքրիկ լուղ Ս. Պատրիարքին
տունը, իսկ երկու արեղայք՝ յերուսա-
ղէ մատուն:

— Շաբաթ աւուր Աստուծի մէջ կար-
գացինք:

Անցեալներն ընտրուած Հայոց կա-
թողիկոսը՝ երբ ժամանէ ի Ռուսիա Լի-
միածնայ վանքը, այդ տեղւոյ կրօնա-
կան վարչութիւնը պիտի ենթարկի
Ռուսիոյ դատական նախարարութեան
կողմանէ պատրաստուած նոր կանոնա-
գրոյն: Բեդրսպուրիէն այդ առթիւ նոր
հրամաններու հրահանգներ տրուած են
կովկասի կուսակալին:

Յայտնի է թէ Լիմիածնայ կաթողի-
կոսը Հայոց հոգեւոր ամենէն մեծ պե-
տըն է: Ռուսիոյ Հայոց կրօնական դատ-

տիրապետութիւնն և նոյն հասարակութեան վարչութիւնը՝ կաթողիկոսին վերադասելով իրեն ներքե և կատարուէին ցարդ, մինչդեռ՝ նոր հրահանգին տրամադրութեանց համաձայն՝ այդ գործեր յետ այսորիկ պիտի կատարուին կովկասի կուսակալին հսկողութեանը ներքե։

— Գեր. Սինոդական եպիսկոպոսը և արեւայք առաջիկայ չորեքշաբթի ուստի կերթան ի Ս. Տեղիս։

— Ռոտոսթոյի վիճակին այցելու Հովիւ Տ. Հմայեակ եպիս. Դիմաքսեան դարձեալ հրաժարեր է՝ վատառողջութեանը պատճառաւ։

— Գոհութեամբ կը ծանուցանեմք թէ Մանգումէի-էֆենտ լրագիրն, որ 1892 օգոստոսէն ի վեր դադրած էր՝ Տէր և Խմբագիր Կարապետ էֆ. Փանոսեանի հիւանդութեան և այլ պատճառներով, յառաջիկայ օգոստոսի 1 էն վերստին հրատարակուիլ պիտի սկսի՝ շնորհիւ վեհ. Սուլթանին։ Փանոսեան էֆ. քաջալերութեան և դիւրութեանց պէտք ունենալով, կը խնդրէ թէ՛ դաւառացի բաժանորդներէն և թէ՛ նոր բաժանորդ գրուիլ սուղոյններէն որ հաճին առաջին թղթատարով իրենց փափաքը հաղորդել, զրկելով նաեւ բաժանորդագիրն երեք կամ վեց մէճիտիյէ։ Կը խնդրէ նոյնպէս մայրաքաղաքիս բաժանորդներէն, ի հաշիւ բաժանորդագրութեան յանձնել երկու կամ երեք մէճիտիյէ՝ երբ ընկալագիրը ներկայացուի իրենց։

Փափաքելի է յոյժ որ Մանգումէ հայ լրագրութեան մէջ վերստին գրաւէ իրեն արժանի տեղը՝ քաջալերեալ ընթերցասէր հասարակութեան համակրալից ընդունելութենէն։

— Վիշնայի երաժշտանոցէն վկայեալ ծանօթ գաղտնակար Վահրամ Էֆ. Սըվաճեան, որ վերջերս Եգիպտոս կը գտնուէր, գնացած է ի Լոնտոն, ուր կը պատրաստուի նուագահանդէս մը տալ ամսոյ 27 ին։ Յուսով է որ նուագահանդէսը նպաստաւոր ընդունելութիւն գտնէ, երկասարդ արուեստագէտին արժանիքն արդէն իսկ գրեւորապէս լինելով Անգլիայի արուեստագէտներու կողմանէ։

— Գոհութեամբ կը ծանուցանեմք թէ բնիկ Ռոտոսթոյի Յովսէփ էֆ. Տէր Ստեփանեան, որ Մալիկի ընթերցողաց ծանօթ է Անգլիական գրականութեան վրայ Լոնտոնէն գրած գեղեցիկ յօդուածներովը, Մանկարարութեան, Կնախտարանութեան և Վիրաբուժութեան վերջին քննութիւնները մի քանի ամիս առաջ փայլուն կերպիւ անցունելէ յետոյ, յուլիսի 11 ին եւս ո՛չ նուազ յաջողութեամբ անցուցեր է տեսական և գործնական քննութիւններն և ստացեր է Անգլիոյ բժշկական և վիրաբուժական երկու նշանաւոր մարմնոց վկայականներն, մին իրրեւ Անգամ Արքայական Համալսարանին կամ Կաճառին Վիրաբուժից Անգլիոյ, և միւսը՝ իրրեւ Պատկաւոր Արքայական Համալսարանին կամ Կաճառին Բժշկաց Լոնտոնի։

Որքան գիտեմք, Տէր Ստեփանեան էֆէնտիէ առաջ միայն երկու Հայեր պատիւ

ունեցած են Լոնտոնի Համալսարանէն այս կրկին աստիճաններն ստանալու, մին է Տօք. Տօպրաշեան, հաստատեալ ի Բերա, և միւսը՝ Տօք. Ասլանեան, հաստատեալ ի Գուլ-գաբու։

Տօքթ. Յովսէփ էֆ. Տէր-Ստեփանեան ժամանակ մ'եւս ի Լոնտոն պիտի մնայ, հիւանդանոցաց մէջ շարունակելու համար իւր արուեստին փորձառական մասը։ Մեր խնդակցութիւնը կը յայտնեմք մեր յարգոյ աշխատակցին՝ իւր պատուարեր յաջողութեանց համար։

— Ազգ. Վարչութիւնը նկատելով որ Պրուսայի վիճակին իւր Առաջնորդին բացակայութեան պատճառաւ անհովիւ մնացած է, որոշած է Պանտրոմայի Պատր. Փոխանորդ Այվազեան Տ. Յովսէփ վարդապետին միանգամայն պաշտօն յանձնել Պրուսայի վիճակին եւս հովուելու, իրրեւ Առաջնորդական փոխանորդ։

— Հիւանդանոցի մէջ կազմեալ բարեգործական ընկերութիւնն, որ կը հոգայ տեղւոյն ազգային վարժարանին ծախքը, իւր կազմութեան վաւերացումը խնդրած լինելով Պատրիարքարանէն, Քաղաքական Ժողովը Ուսումնական Խորհրդոյ յանձնեց այդ առաջարկութեան նկատառումը։

ՄԱՂՆԻՍԱՅԷՆ. — Ուրախութեամբ կը դիտեմք անձնուէր գործունէութիւնն Գերեզմանոցի ընկերութեան անդամոց, որք 5-6 ամիսէ ի վեր մեծ եռանդով կը ջանան այդ սուրբ վայրը, որ գրեթէ ամայի էր, արժանաւոր դիրքի մը վերածելու, Բոլորալիքը շատ ծաւեր տնկած և մէկ կողմն ալ պարտիզի վերածած են, ուրկէ կը հոգացուի պահապան պարտիզական տարեկանը։ Կարողութիւն մաղթելով, կը յորդորեմք չը պտուակալիլ անհամաձայնութեանց պատճառաւ, որով եւ չլնասել իրենց ձեռնարկած օգտակար գործին։

ՄԵԶՊՈՒՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

Մեզպուրեան ազգային վարժարանի պալատեալութեան հանգէսը երեքշաբթի օր տեղի ունեցաւ վարժարանին ընդարձակ պարտիզին մէջ յիւսկիւտար։ Հանդէսին կը նախագահէր Տ. Մեքլիսեան Ս. Արքեպիս. Մուրատեանց։ Ներկայ էին նաեւ Տ. Մատթէոս եպիս. Իզմիրեան, վարդապետը, քահանայը, երկուքն ընտրեալ բազմութիւն մը, ինչպէս և յատուկ պաշտօնեայ մը Մէտրիֆի կողմանէ։ Աշակերտուհիք, սովորակ հագուած, բազմած էին բեմին վերայ։ Նախագահ Սրբազանը հանդէսը բացաւ Տէրունական աղօթքով։ Ապա փոքրիկն Ատրինէ Մեզպուրեան՝ վեհափառ Կայսեր արեւաշատութեան համար արտասանեց թըրքերէն գովարդի ոտանաւոր մը, զոր յօրինած էր Օսմաներէն լեզուի յառաջագէտ ուսուցիչներէն և Պետական Խորհրդոյ նախագատ ատենի քարտուղարներէն Պետրոս էֆ. Կարապետեան։ Մեզպուրեան էֆ. ի հակիրճ տեղեկագրին ընթերցումէն յետոյ, սկսաւ մրցանակաբաշխութիւնը։ մրցանակ ստացան իւրաքանչիւր կարգի մէջ առաջին հանդիսացողները միայն։ Շրջանաւարտ աշակերտուհիք արտասանեցին Հայերէն և Ֆրանսերէն ճառեր, մաքուր և յստակ առգագա-

նութեամբ։ Երգուած երգերն, դաշնակահարութիւնը և վարժարանին սրահին մէջ իցոյց դրուած ձեռագործք անգամ մ'եւս անվիճելի կերպիւ ապացուցին թէ, Մեզպուրեան վարժարանին մէջ ամենէն աւելի խնամով աւանդուած առարկայներէն են նաեւ ձայնական և գործիական երաժշտութիւնն ու ձեռարուեստը։ Ի վերջոյ՝ աղջկանց դաստիարակութեան խնդրոյն վրայ գեղեցիկ կերպով խօսեցաւ Տ. Մեքլիսեան Սրբազանի աշակերտներէն Տ. Գէորգ վարդ. երէցեան, վկայելով միանգամայն վարժարանին ուսումնական յառաջադիմութեան իրրեւ ականատես, քանիցս ներկայ գլուխուած լինելով քննութեանց։ Նախագահ Սրբազանը հանգէսը փակեց, օրհնելով զՏէր և զՏիկին Մեզպուրեան, վարժարանին ուսուցչաց դասը, աշակերտներն և հանդիսականները։

Այս տարւոյ շրջանաւարտք են.

- Օր. Վիքթոր Պառնասեան
- » Անգին Երէցեան
- » Շնորհիկ Լօքմակէօզեան
- » Պէտրիս Գուլուճեան
- » Մաքրիկ Քիւչիկեան
- » Լիւսի Պետրոսեան
- » Պէտրիս Օտտապաշեան

Հանդիսին մէջ ուրախութեամբ դիտեցինք՝ սկիզբէն մինչեւ վերջ լուռ, անձայն, անշուշտ ունկնդրութիւնն երկուքն հանդիսականաց, որոց մէջ իգական սեռն աւելի ստուար թիւ մը կը կազմէր։ Ասիկայ ականբեւ ապացոյց է մեր ընտանեաց մէջ քաղաքավարութեան և բարեկրթութեան զարգացմանը, և այս արդիւնք անշուշտ պարտական եմք Մեզպուրեան վարժարանի նըման կրթական հաստատութեանց գործունէութեանը։

ԴՈՒՐԵԱՆԻ «ԹԱՏՐՈՆ»

Վստահաբար ծանուցուած է մեզ թէ վաղը, կիրակէ, պիտի կատարուի վերջապէս՝ ողբացեալ Պետրոս Դուրեանի Թատրոն անուն թատերախաղին ներկայացումը Իսկիտարի մէջ։ Ժողովուրդն այս անգամ կըրնայ ներկայանալ թատրոնին դուռը ուրկէ յուսախար ետ դարձած էր նախընթաց երկու կիրակէները։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Տիարալէիի Արղընի-Մատէն գաւառին թաղապետական բժիշկ կարգուած է Տօքթ. Յարութիւն էֆ. Թուրիկեան, որ չարթուս մեկնեցաւ յիւր պաշտօնատեղին։

— Անիոնի այս տարւոյ հունձքէն մինչեւ անցեալ երկուշաբթի օր 50 կողով աֆիօն բերուեալ է Զմիւռնիոյ հրապարակ։ Անցեալ տարի այս ժամանակ 510 կողով բերուած էր։ Այս տարի Այտընի նահանգէն 2000 կողով աֆիօնի բերք առնուած է, Սեւանիկէն՝ 300, Մալաթիայէն՝ 400, և ուրիշ տեղերէ՝ 400. գումար 3100 կողով։

— Բժեկական այցելութեան պիտի ենթարկին ճիւրը Մուսթաֆա-փաշայի կայարանին մէջ՝ Եւրոպական երկաթուղիով եկող ուղեւորք։ Բժշկական այցելութիւն հաստատուած է նաեւ ի Գալաթ, յուլիս 6 էն յետոյ Օտեսայէն եկող ուղեւորաց համար։

— Մահուան դատապարտուած է Տիվրի-
կի բնակիչներէն Դաւիթ անուն մարդ մը՝
մարդասպանութիւն գործելուն համար։
Կայս. իրաւաւ մը հրամայած է գործադրել
այդ վճիռը։

— Բժիշկները զերծ պիտի լինին թէմէթ-
թիւի տուրքէ։

— Մենաւեճոյն խնդրուած է Կ. Պոլսոյ
մէջ սպանդանոցներ հաստատելու, որքա-
նազաններ ունենան և ամէն կերպիւ հա-
մապատասխանեն հանրային առողջապահու-
թեան օրինաց։

— Կայս. Թանգարանին մէջ գրատուն մը
պիտի հաստատուի որուն համար կրթական
նախարարութիւնը կայս. իրաւով արտոն-
ուած է 100,000 զրշ. ի մօտ գրքեր գնելու։

— Լուսնայափոխներու դասապետ (Սարրա-
ֆան քէթիւլուտաւ) Արսլանեան Մանուկ
էֆէնտի մահուամբ յիշեալ կարեւոր պաշ-
տօնը բաց մնացած լինելով, Թաշքէան Սար-
գիս Էֆէնտի խնդրած է ինքն ստանձնել և
կատարել զայն ձրիաբար՝ տարեկան գոյա-
նալիք 6-7 հարիւր ոսկւոյ եկամուտը շին-
ուելու վրայ եղող պետական Անկէլանոցին
թողլով։

— Ներքին գործոց նախարարութեան կող-
մէն գրուած է դաւառաց կուսակալներուն
թիւ 1300 (1881) թուականէն յետոյ ծնած
արու և էգ տղայոց համար թէգքէրէի Օս-
մանիէ չաւնոյ ծնողք կամ խնամակալք դը-
րամական տուգանաց պէտք է ենթարկուին։

— Հրամայուած է բնաւ չներել մարդա-
համարի դէպքերը ծածկողներէն առնուե-
լիք դրամական տուգանքները և ի գործ
դնել օրինաց արամադրութիւնները։

— Զմիւռնիացի երկու վաճառականք մե-
նաշնորհ խնդրած են քաղաքին ու շրջակա-
յի մէջ օդի վաճառման համար։

— Դեպարտեսից վարժարանի մրցանա-
կաբաշխութեան հանդէսին մէջ, որ Բշ. օրը
տեղի ունեցու, մրցանակի արժանացան հե-
տեւեալ ուսանողք։

Իւզաների Ա. տարի. — Մարտիրոս էֆ.
Պօլեան՝ Ա., Բէնամէֆ. Զամաթի Բ., Մէհ-
մէտ պէյ՝ Գ. մրցանակ։

Դաւադալէմի Գ. տարի. Արամ էֆ. Միր-
զայեան՝ Ա. մրց. — Բ. տարի. Նշան էֆ.
Աւագեան Ա. մրցանակ։ Բ. տարի. Արամ
էֆ. Պաքալեան՝ Ա. Մեհմէտ էֆ. Պէնկեան՝
Բ., Թաղէսա էֆ. Զաքարիա Մ. մրցանակ։
— Նախապարտաւորական տարի. Ուսթ
պէյ՝ Ա., Բալթի էֆէնտի՝ Բ., Սահակ էֆ.
Յարութիւնեան՝ Գ., Հիւսնի պէյ՝ Գ. մըր-
ցանակ։

Արձանագործութեան Գ. տարի. Ճիվան
էֆ. Պրիմօ՝ Ա. մրցանակ։ — Բ. տարի. Տիգ-
րան էֆ. Եսաեան՝ Բ. մրցանակ։ — Ա. տա-
րի. Մէսրուր պէյ՝ Ա. մրցանակ։

Ճարտարապետութեան Գ. տարի. Կարա-
պետ էֆ. Էթմէքէան՝ Ա., Թորոս էֆ. Թօ-
րամանեան՝ Բ. մրցանակ։ — Գ. տարի.
Աւետիս էֆ. Սարրաֆեան, Արամ էֆ.
Ֆէթվաճեան։ — Բ. տարի. Պօղոս էֆ. Խը-
տըրեան՝ Ա., Յովհաննէս էֆ. Պէզիրճեան՝
Բ. մրցանակ։ — Ա. տարի. Ալաէտտին է-
ֆէնտի՝ Ա., Լեւոն էֆ. Էքսէրճեան՝ Բ.,
Վահրամ էֆ. Պէքեարեան՝ Գ. մրցանակ։

— Ի Նիկովիդիա հաստատուի տիպարա-
գարակին տեղը որոշելու համար, երկրա-
գործական քննիչ Աղաթօն էֆ. հոն ուղե-
ւորեցաւ։

— Կարնոյ նահանգին ոստիկան-զինուո-
րաց հրամանատար Էմին պէյ՝ Բասէն, և
կեդրոնին ոստիկան-զինուորաց հաղարպետ
Մէհմէտ պէյ՝ Քլի զրկուեր են, ձերբակա-
լելու համար այդ կողմերն ասպատակող ա-
ւազակները։

— Վանայ կուսակալ Պահրի փաշա, որ
քննական պոյոյտ մը կը կատարէ, Պաշա-
լէ ժամաներ է։

— Սեղանաւորաց արհեստագետ կարգը-
ւեր է՝ Սպարապետի Դրան պիտոյք հայթայ-
թող վաճառականներէ Լիզօր էֆէնտի։

— Համագային Անկէլանոցին ի նպատ-
օտար երկիրներու օսմանեան դեսպանաց
ու հիւպատոսաց կողմանէ կատարուած
հանգանակութեան գումարը հասած է 2,500
օսկւոյ։

— Վարժապետանոցներ պիտի հաստա-
ուին Սելանիկի և ուրիշ մէկ քանի նահան-
գաց կեդրոններուն մէջ։

— Զրիաբար պիտի պատրաստեն թա-
ղապետութիւնք, ըստ Կայսերական հրա-
մանի, թէ՛ թաղապետական և թէ՛ մասնա-
ւոր բժիշկներու կողմանէ աղքատաց արուած
դեղագիրները։

Հ Ո Ւ Ն Ձ Ք Ե Ր Ը

Աշխարհի զանազան կողմերէն հնծոց
վերջնական վիճակին վրայօք ստացուած
տեղեկութիւններէն կը հետեւի՝ թէ Մեծին
Բրիտանիոյ մէջ ցորենը գոհացուցիչ է, վար-
սակը նուազ։ Աւստրիոյ-Հունգարիոյ մէջ
ցորենն ընտր է, բայց միջինէն նուազ քա-
նակութեամբ, կորեկն անշան է։ Ֆրանսա-
յի մէջ ցորենը միջին քանակութեանէն աւե-
լի է։ Ռուսիոյ մէջ հունձքը ժամանակին
չէ եղած, վերջին անձրեւները տեղ տեղ
միտս պատճառած են ձմեռուան ցանքին։
Ռուսիոյ մէջ ձմեռուան ցանքէն արտադըր-
եալ ցորենն ընդհանրապէս գոհացուցիչ է,
միջատներու պատճառած վնասն անշան
եղած է։ Թուրքիոյ մէջ հունձքն ընդհան-
րապէս առատ է։ Այտընի կուսակալութեան
արտադրած գարին ու բակլան նախընթաց
տարւոյն կրկինն կը հաւասարին։ Միացեալ
Նահանգները գոհ են, նոյնպէս և Հնդկաս-
տան ուր միայն Պոմպոյի վիճակին մէջ սո-
վորականէն մէկ տասներորդ աւելի տարա-
ծութեամբ հող մշակուած է և նախընթաց
տարւոյ մէկ ու կէսէն աւելի բերք հնձը-
ուած։

ԴԱՏԱԿԱՆ ՓՈԽԱՆՈՐԴՈՒԹԻՒՆ

Ա. Ա. Սուրէնեան, իրաւագէտ-փաստաբան
Վ.Ա.ՅԵՏԱԼ ԲԱՐԵՋՈՒ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻՆ

Մասնաւորապէս Պոլսոյ Շէրիի, Էվքաֆի,
Հուզուգի, Թիճարէթի դատարանաց վերա-
բերեալ նախնական, վերաքննական ու վըճ-
աւճեցական դատերու փոխանորդութիւնը
կ'ստանձնէ և կը կատարէ փութով ու
խղճմտութեամբ։ Պատրաստ է նաեւ ու է է
դատական գործոց նկատմամբ գրաւորա-
պէս իրմէ խնդրուած խորհուրդները տալու
և օրինական միջոցներ ցուցնելու։

Գրասենեակ՝ Պահչէ-գարու Շէր-իւլ-
իսլամ խան, թիւ 4։

Յ Ա Ն Կ Գ Ր Ո Ց

	Գրո.
Առաջին Ընթերցարան	2
Առեւտրական Թուաբանութիւն	8
Առողջաբանութիւն Աղչկանց	5
Բանալի Շարադրութիւն	3
Գիթելիֆ ու Պարսիֆ	5:20
Դասագիրք Թուադիսութեան	4
Երկրորդ Ընթերցարան	2:20
Իրագիտութիւն	5
Նամականի (Ս. Դաբամանեան)	7
Ուսումն Բրիտանական հաւասոյ	1:20
Սրբազան Պատմութիւն հին ու յիսթ	4
» » նոր ու յիսթ	3
Վերքէր	8
Օսմանեան Պատմութիւն (Ա. Ե. Բ. հասոյ 8	

Վերոյիշեալ գրեանց կեդրոնացեալին է
Ն. Կ. Պէրպէրեան սպարան Կ. Պօլիս Էսկի
Զապրիլէ Եասսէսի, քիւ 61. ԵԱՍ զնոյնեռու
0/0 20 գեղը կը լինի։

Ընթացի նախակրթութեան Տանկալսոս
Հայոց, ԱՌԱՋԻՆ ՎԱՐԺՈՒԹԻՒՆ ՄԱՆԿԱՆՑ,
յօրինեց Սմբատ Դաւիթեան, Դ. տպագ-
րութիւն. Գին 3 1/2 զրշ։

ԱՏՐԻԷՆ. Վրպերգութիւն ի խաչատրոյ
Ս. Բաղտատարեան, բաժանեալ ինն գրուած-
ներու՝ որոց իւրաքանչիւրը ձօնեալ է այս
կամ այն անձնուորութեան։

Վահան Գ. Զարգարեան գրատունը սկսած
է հրատարակել ամսական Գրացուցակ մը
Նոր Հասարակութեանց, որ ձրի պիտի զըր-
կուի հրատարակչաց, վրաւաճառաց և վար-
ժարանաց։ Հաւը 10 փարայ է. տարեկան
բաժանորդագիրը Պոլսոյ համար 3 զրշ.
գաւառաց համար 6 զրշ.։ Զարգարեան էֆ.
կը խնդրէ հրատարակիչներէն ու հեղինակ-
ներէն՝ իրենց երկերէն մէկ մէկ հատ զրկել
իրեն։ Երկու օրինակ զրկուած գրեանց հա-
մար յաջորդ թերթին մէջ դարձեալ կ'ազ-
գարարուի։ Յուլիսի ամսաթիւը հրատա-
րակուած է արդէն։

ԽԱՋԻՆԷԼԻ ՖԻԼԻՆՈՒՆ. — Գայսէրեան Գրի-
գոր էֆէնտի սկսած է հրատարակել այս թեր-
թըն, որու արտօնութիւնն առած էր կան-
խաւ Ճէրրահեան Տօք. Կարապետ էֆէնտի։

« Խաղնիկ Ֆիլանտըն » կը խմբագրուի կա-
րող Թուրքերու կողմանէ, թերթը կը ծախ-
ուի 10 փարայի և տարեկան բաժանորդա-
գիրն 10 զրշ. է։

Ամէն անոց, որք թուրքերէն կարգաւ
գրել գրեան, կը յանձնարարեմք այս որ-
չափ ածան նոյնչափ և կարեւոր թերթն։

Առաջնորդ գրուցասրութեան Անգղիերէն
լեզուի, հանդերձ արտասանութեամբ և
Հայ բացատրութեամբ։ Գին 5 զրշ։

Օսմ. իւրան 100 զրշ. ԷՆ			
Մէճիալէ	108	Բուսիոյ բոլ	89 30
Քառորդ մէճիա	107 5	Կարուէն	87 16
Մանր մէճիա	103	Կրիֆից	51 15
Մէթալէր	97 30	Անգղ. իւրա	110 7
Գոնտիլաւէ	23 37	Բուս. երկ.	87 50

Մանէթ թղթագրամ 8 67

ԱՐՏՈՆԱՏԻՐ Ա. ՍԱՔԱՅԵԱՆ

ՏՊԱԳՐ. ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ
Էսկի-Զապրիլէ փողոց. քիւ 61